* * *

Բարի իրիկուն, վշտալի մայրեր,
Ինչ ցեղ էլ լինեք,
Ինչ տեղ էլ լինեք,
. . . . ու սուգ
Իմ մայրերն եք դուք.
[Իմ մայրն էլ ձեզ պես,
Դուք էլ նրա պես,
Ճըրագի առջև,
Կըրակի առջև,
Դռան առաջև
Կամ լուսամուտի,]
Անկողնում անքուն
Պտույտ եք գալիս
Ճամփա եք պահում
Երբ պետք է ծեգի,
Երբ պետք է մըթնի,
[Երբ պետք է օրն անցնի,
Երբ կյանքը անցնի –
Տանջանքը անցնի]
[. . . . .]
Բարի իրիկուն, վշտալի մայրեր,
Որ գիշերն՝ անքուն, ցերեկը՝ երեր
Մի հոգս ունիք լոկ,
Ճրբ պիտի արդյոք
Էս կյանքը անցնի,
Տանջանքը անցնի։
Ինչ ցեղ էլ լինեք,
Ինչ տեղ էլ լինեք,
. . . . . ու սուգ
Իմ մայրերն եք դուք։